ՆԱԽԱԳԻԾ 1

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ
ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 15-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 1-ին հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած հետևյալ հարցերից.

1) Պռոշյան համայնքի 2018 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին

2) Պռոշյան համայնքի 2018 թվականի սեփականության ամենամյա գույքագրման ամփոփ արդյունքները հաստատելու մասին

3) Պռոշյան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/Ժ.Պ./ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ 2-Ն

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ի գիտություն ընդունել 2018 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը / համաձայն հավելվածի/:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ԺՊ/՝ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ 3

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՄՓՈՓ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ի նմասի 32-րդ կետով ու հիմք ընդունելով Պռոշյան համայնքի ամենամյա գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված գույքագրման ամփոփ արդյունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Կոտայքի մարզի Պռոշյանի համայնքապետարանի և ենթակայության հիմնարկների 2018 թվականի սեփականության ամենամյա գույքագրման ամփոփ արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ԺՊ/՝ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 4-Ն

---

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Պռոշյան համայնքի 2019 թվականի բյուջեն / համաձայն հավելվածների/ .

2. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանել՝

1) համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ.

2) համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ԺՊ/՝ ԱՐԱ ԱՐԵՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎՌԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ